ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3996-Ա « 18 » հոկտեմբերի 2024 թ.

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Ալբերտ Հարությունյանի դիմումը՝ Ե.Քոչար փողոցի հ.3 շենքի հ.5 ավտոտնակի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 06.11.2019թ. հ.06112019-01-0216 վկայական) զբաղեցրած հողամասի համար կնքված վարձակալության պայմանագրերի գործողության ժամկետները երկարաձգելու մասին:

Ե.Քոչար փողոցի հ.3 շենքի հ.5 ավտոտնակի կադաստրային արժեքը կազմում է 1,914,723 ՀՀ դրամ:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածների 1-ին մասերով, ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ, Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի հ.50-Ն որոշման հավելվածով.

1.Լիազորել Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի քաղաքապետի անունից, Ալբերտ Հարությունյանի հետ կնքել համաձայնագիր՝ Ե. Քոչար փողոցի հ.3 շենքի հ.5 ավտոտնակի զբաղեցրած համապատասխանաբար՝ 18,2քմ և 4,0քմ մակերեսներով հողամասերի համար կնքված 23.11.1998թ. հ.ՓԲ-696 06/1816 և 01.09.2004թ. հ.23/35-668 վարձակալության պայմանագրերի գործողության ժամկետները երկարաձգելու և դրանցում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին՝ ներառելով պայմանագրերի հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) 23.11.1998թ. հ.ՓԲ-696 06/1816 պայմանագրի 19-րդ և 01.09.2004թ. հ.23/35-668 պայմանագրի 18-րդ կետերը լրացնել նոր պարբերությամբ, հետևյալ բովանդակությամբ.

«Կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2029 թվականի նոյեմբերի 1-ը:

2) 23.11.1998թ. հ.ՓԲ-696 06/1816 պայմանագրի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.Հողամասի շուկայական արժեքին մոտակարված կադաստրային արժեքը 1քմ-ի համար կազմում է 90 628 ՀՀ դրամ :».

3) 23.11.1998թ. հ.ՓԲ-696 06/1816 և 01.09.2004թ. հ.23/35-668 պայմանագրերի 7-րդ և 6-րդ կետերը լրացնել համապատասխանաբար՝ 7.8, 7.9 և 6.9, 6.10 ենթակետերով, հետևյալ բովանդակությամբ.

«7.8 և 6.9 Սույնով կողմերն անվերապահորեն համաձայնվում են, որ պայմանագրերի 7.7-րդ և 6.8 ենթակետերի համաձայն պայմանագրից միակողմանի հրաժարվելու մասին Վարձատուի գրավոր ծանուցումն իրականացվում է հետևյալ երեք եղանակներով միաժամանակ.

ա)Վարձատուի գրավոր ծանուցումը հրապարակվում է Երևանի քաղաքապետարանի www.yerevan.am, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am ինտերնետային կայքերում,

բ)Վարձատուի գրավոր ծանուցումն ուղարկվում է Վարձակալի էլեկտրոնային հասցեին (փոստին)՝ առկայության դեպքում,

գ)Վարձատուի գրավոր ծանուցումն ուղարկվում է փոստային առաքմամբ՝ պատվիրված նամակով».

«7.9 և 6.10 Սույնով կողմերն անվերապահորեն համաձայնվում և երաշխավորում են, որ պայմանագրերի 7.8-րդ և 6.9-րդ ենթակետերում նշված ծանուցման եղանակները համարվում են պատշաճ և վավեր: Ընդ որում ծանուցումը նշված կայքերում հրապարակվելու օրվանից Վարձակալը համարվում է պատշաճ ծանուցված պայմանագրից միակողմանի հրաժարվելու մասին: Վարձակալն անվերապահորեն համաձայնվում է, որ պայմանագրի գործողության ողջ ընթացքում www.yerevan.am և www.azdarar.am կայքերին հետևելն իր անընդհատ և որևէ հանգամանքով չընդհատվող պայմանագրային պարտավորությունն է».

4) 23.11.1998թ. հ.ՓԲ-696 06/1816 և 01.09.2004թ. հ.23/35-668 պայմանագրերի համապատասխանաբար՝ 9-րդ և 8-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. և 8. Հողամասի տարեկան վարձավճարը՝ համաձայն Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի հ.50-Ն որոշման հավելվածի 39-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերության՝ կազմում է 16 494 (տասնվեց հազար չորս հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ (18,2 քմ x 90 628 ՀՀ դրամ x 1%) և 3 625 (երեք հազար վեց հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ (4,0 քմ x 90 628 ՀՀ դրամ x 1%): Պայմանագրի կնքման պահին հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը 1քմ-ի համար կազմում է 90 628 ՀՀ դրամ:».

5) 23.11.1998թ. հ.ՓԲ-696 06/1816 և 01.09.2004թ. հ.23/35-668 պայմանագրերի համապատասխանաբար 10-րդ և 9-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. և 9. Շուկայական արժեքին մոտարկված հողի կադաստրային արժեքի և (կամ) Երևան քաղաքի ավագանու որոշումներով վարձավճարի չափի փոփոխման (աճի դեպքում) դեպքերում Վարձատուն պարտավոր է նոր արժեքի (վարձավճարի) մասին նախօրոք գրավոր տեղյակ պահել Վարձակալին: Շուկայական արժեքին մոտարկված հողի կադաստրային արժեքի և (կամ) վարձավճարի աճի դեպքում հաշվարկված վարձավճարի չափը ենթակա է կիրառման (պայմանագիրը համարվում է փոփոխված) ոչ շուտ, քան դրա մասին գրավոր տեղեկացվելուց 15 օր անց: Վարձավճարը չի փոփոխվում, եթե Վարձակալը մինչև համապատասխան 15-օրյա ժամկետի ավարտը Վարձատուին

ծանուցել է պայմանագրի վաղաժամկետ դադարեցման (պայմանագրից հրաժարվելու) մասին:»:

2.Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված համաձայնագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ